

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր 8 Մէճ
՝ Գաւառաց 10 Մէճ
Վեցամեայ Կ. Պոլսոյ 4 Մէճ
՝ Գաւառաց 5 Մէճ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ
յանուցման տողը մէկ անգամի հա-
ւար 3 զուրուշ, երկու անգամի հա-
ւար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ աւելարկութիւն կը լիայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՕԴՈՍՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պարիզ 14 օգոստոս
Պաշտօնի Զուրկերու հաստ: Սէնթ-Մարիւրի թիւ 1-ին տնօրէնը Մարաշա-
տին փախստեան դործին մէջ ծանր կաս-
կածներու տակ է:
Իտալիա Մատրիսի կառավարութիւնը
ճանչելու հաւանութիւն տուաւ:
Պարիզ 12 օգոստոս
Պոնապարթեան խօսքին նայելով,
Սպանիոյ կառավարութիւնը ճանչելու ա-
ռաջարկութիւնը, զոր ամենէն առաջ Գեր-
մանական կառավարութիւնն ըրաւ, Գաղ-
ղիոյ դէմ միջոց մ'է, որոյ արդիւնքն այս
վերջինն իտալիոյ մօտեցնել պիտի ըլլայ:
Սթամբուլ 12 օգոստոս
Պաշտօնի մարաշախտ ճանչուեցաւ քա-
ղաքին մէջ:
Պարիզ 16 օգոստոս
Գաղղիա, Անգղիա, Պրուսիա և իտա-
լիա վերջնական կերպիւ ճանչեցին Սպա-
նիոյ կառավարութիւնը:
Թշնամութիւնք սկսան էլորէ գետին
քով: Հանրապետականը յաղթութիւն
մըրին Գարսոսեանց դէմ Օթէյլայի մօտ
Աթէնք 15 օգոստոս
Քարապիտոս անուն աւազակն այսօր
զլիստեցաւ:
Երեսման 17 օգոստոս
Օսմ. Բոնա. 43 7/8
Ֆրան. 4865
» 4869 54 3/8
» 4871 62 1/2
» 4872 76
Անգլ. Բոնա. 92 9/16
Օսմ. նոր փոխադրութիւն 49 1/16
Ի. Վերբուլ 17 օգոստոս
Բաժակի Միտլիկ-Օրէան 8 3/8-1 2
» Գայր Տօլէրաճ 5 3/8
Դարիւս 42000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարաթ օրը Բարձր. Մայր թա-
գուհին՝ Եղիպտոսի Բարձր. Խորհրդին
մայրն ու ամուսինը Տոլմա Պահճէի
պալատը հրաւիրելով՝ իրիկունը փա-
ռաւոր ճաշ մը տուաւ, և գիշերն ալ
հիւրընկալեց:
Այս այցելութեան առթիւ Խոր-
հրդին մօտ Օսմանիէի ակադեմիկոս Կոստ-
նանուլան մ'է ամուսնոյն ալ ակադեմի-
կոս քայլ մ'ընծայ արուեցաւ:
Մայրաքաղաքի Ամերիկացիոց
գետնային անցեալ շաբթու երեք
գաղափարութիւն կ'ընդ Բ. Դրան հետ
Ասոնց առաջինն՝ Ամերիկայի հալա-
տակաց Թուրքիոյ մէջ անշարժ կալ-
ուած ստանալուն վրայ է. երկրոր-
դը՝ երկաքանչիւր տէրութեանց հը-
պատակներուն իրենց ազդեցութիւն-
ընդ փոխելուն խնդրոյն վրայ է, այն-
պէս որ Օսմանեան հպատակ մ'Ամե-
րիկա բնակած ժամանակ, և Ամերի-
կայի հպատակ մ'ալ Օսմանեան եր-
կիրը բնակած ժամանակ կրնայ իր հը-
պատակութիւնը փոխել և գտնուած
երկրին իշխանութեանը հպատակ
գրուիլ. երրորդն ալ՝ մէկ երկրէն
միւսը փախչող որճաբործներն իրե-
րայ յանձնելու վրայ է:

Շարաթ օրը Գաղղիերէն նոր լը-
րագիր մը հրատարակել սկսաւ խա-
փանեալ Լէվանթ Թայմը լրագրին
տպարանէն Բուօկուէ տ'Օրիան անու-
նով, որ շարաթն երեք անգամ այն
է երեքշաբթի հինգշաբթի և շա-
բաթ օրերը մեծ թերթ և միւս ե-
րեք օրերն ալ կէս թերթ պիտի հանէ:
Մայրաքաղաքի մէջ կազմուած
ընկերութիւն մը՝ Սե ծովու մօտ Տէր-
քօսի լճին շուրջ Բերա բերելու ար-
տօնութիւն ստացած ըլլալով, յիշ-
եալ շուրին ըմպելի ըլլալուն կամ
չըլլալուն վրայ անհամաձայնութիւն
ծագեցաւ քիմիագէտ երկրաչափնե-
րու, բժշկաց և ոյլ քիչ շատ ձե-
ռքն հաս անձանց մէջ. ոմանք կը պն-
դեն թէ երբոր թորիչ մեքենայնե-
րու միջոցաւ զտուի, կրնայ խմելու
գործածուիլ, իսկ միւսները կը պն-
դեն թէ ծովու ջրին հետ խառնուե-
լուն և ուրիշ փնտասկար հիւթեր պա-
րունակելուն համար խմելու չկրնար
գործածուիլ:
Այս անհամաձայնութիւնը լուծե-
լու համար՝ ընկերութիւնը բժշկա-
պետ Մարքօ փաշայէն խնդրեց որ
քանի մը հմուտ բժշկներէ յանձնա-
ժողով մը կազմելով քննել տայ յիշ-
եալ շուրին, և արդիւնքն ընկերու-
թեան ծանուցանէ: Մարքօ բաշան
ալ այս գործը տըքնոր Սէրվիլէն և
Ապտուլլահ Էֆէնդիներուն և Պ. Պոն-
քօփքի քիմիագէտ գեղադործին
յանձնեց, որ անցեալ կիրակի օրը
Տէրքօս երթալով քննեցին համա-
նուն լճին շուրջ:
Քննութեան արդիւնքը գեռ ծա-
նուցուած չէ:
Շիրքէթի խալիքի տնօրէնու-
թիւնը՝ Բուօկուի Եւրոպական և Ա-
սիական եղբայրները բանող շոգենա-
ները ճանչելու դիւրութեան համար
որոշեց որ կամուրջին քով կեցած
ժամանակին՝ Եւրոպականները կար-
միր դրօշակ մը կրեն իրենց կայմին
վրայ, Ասիականներն ալ կանանց դը-
րօշակ կրեն:
Ուրբաթ օրը Գաղղիական Մէսաթ-
րիի Թամիզ շոգենալը՝ որ Սէլանիկ
պիտի երթար, մայրաքաղաքի նա-
ւահանգստէն դուրս ելած միջոցին
հոսանքէն քշուելով գնաց Անգղիա-
կան Պէնկապ շոգենալին վրայ ինկաւ,
և երկուքն ալ բաւական ծանր վնաս
կրեցին:
Այս պատճառաւ Թամիզ շոգենա-
լը չկրցաւ մեկնիլ մայրաքաղաքէն և
նորագութեան դուրսեցաւ:
Ճիհանկիլի վերջին հրդեհին դուր-
ժած փաշա մեր շարաթ առուր ծա-
նուցուէն շատ աւելի է: Այրած տու-
ներուն թիւը 30 կը հասնի:

Շարաթ օրը Ճիհանկիլի թաղը
մարդասպանութիւն մ'ըղաւ, զոր հե-
տեալ կերպիւ կը պատմէ Լա Թուր-
քի լրագիրը:
Սպանեալը Կոյսերական զօրաց
բանակին ծառայող անասնաբոյժ Գօլ
աղախ մ'էր:
Այս մարդն իր բարեկամ՝ քեա-
թիպէ մը գլխուածով սպաննուեցաւ:
Բարեկամը գործի մը վրայ տորճա-
նակ մը տեսնելով, պարապ կարծեց
դայն և անասնաբոյժին ուղղելով կը-
րակեց: Յանկարծ պայթիւն մը լըս-
ուեցաւ և գժապղ. անասնաբոյժը
զարնուելով՝ քանի մը վայրկեանէն մե-
ռաւ:
Կրտսի թէ խեղճ մարդուն մայրն
այս դէպքն իմանալով խեղճ կրտս-
ան է:
Իսկ ակամայ մարդասպանն ոս-
տիկանութեան դուռը տարուելով
քննութեան ենթարկեցաւ:
Ուրբաթ օրը Խոտական առա-
գաստանաւ մը մայրաքաղաքի նա-
ւահանգիստը մտնելու ատեն մայրու-
նա մ'ընկղմեց, որոյ մէջ երկու մարդ-
կային և երկուքն ալ ծովակուր եղան:
Մարտիկայի վերջին շոգենալը 50
անգղիական նոյթ և մարուկ բերաւ
Կոյսերական ակադեմի համար:
Այս ընտիր կենդանիներն Եղիպ-
տոսի Խորիզ գնած ու զրկած ըլլա-
լով, վսեմ Արաշա մէյլը զաննք
շոգենալէն հանել տալով վեհ. Սուլ-
թանին ակադեմիային յանձնեց:
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆԻ
3 օգոստոս երկուշաբթի իրիկուն 48 9
6 օգոստոս երեքշաբթի առաւօտ
բացուեցաւ
կէս օր
Կ. Պոլս 5 օգոստոս
Սօսիթիէ ժէնէրայի բաժինք Անգլ. Վր. 6 25
« Փոխանակութեան » 4 5
Կ. Պոլսոյ Պանքային » 4 20
Քրէտի Ժէնէրայ » 9 20
Քրէտի Օսթրո-թիւրք
երկաթուղեաց հին 3ր. 107 1/2
նոր 84 1/2
Փոլս. 4863 » 314
» 4865 » 316
» 4869 » 268
» 4872 » 76 1/2
Թրամուէյ 0սմ. լր 5 75
ԸՆԹԱՅՆ ԳԵՂԱՍՈՑ
5 ՕԴՈՍՈՍ
Անգլ. Վրա զուրուշ 409.28
Նաթոյ ան ոսկի » 87 25
Իմաէթարպի Ռուս » 89 40
Գրք միջ » 31, 24
Հինգ փրանք »
Հինգ ոսկ » 104
Պղինձ » 425 30

ՊԱՅՄԱՆՔ

Դեւրս գացած լրագրաց հան, ու
ծախքը թմբագրութեան վրայ է:
Լրագրոյն վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրիթիւն թմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լս, Չինիլի Խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի:

Դեր. Խորէն սրբազանի հետ երէկ ա-
ռաւօտ տեսակցելու առիթ ունենա-
լով, Խորին սրբազանութիւնն յայտնեց
մեզ թէ Ամբրոսիոս վարդապետը ոչ
թէ ամուսնական դատեր վերաքն-
նելու պաշտօն ունեցող դատական
մասնաժողովին, այլ Աղթամարայ Խա-
չատուր սրբազանի 500 ոսկոյ խընդ-
ւոյն քննութեան մասնաժողովին ան-
դամ անուանած է: և այն ալ ոչ թէ
Խորն. ժողովոյ գաղանի քուէով, այլ
ինքնիշխան առաջարկելով և ժողովին
մեծամասնութեան հաւանութիւնն
ստանալով. իսկ գործին միւս պարա-
գաներն ինչպէս որ պատմեցինք նոյն
են, այսինքն յիշեալ վարդապետին
անհրաւէր և առանց Ս. Նախագահի
գլխաւորութեան երթալ մասնաժողովին
մէջ բաղմիլը, Ս. Պատրիարքին իրա-
ւացի գժգոհութիւնն ու արդար գլխ-
տողութիւնները, Ամբրոսիոս վարդա-
պետը կանչելով հրաժարելու յորդո-
րէն և անոր անաստեղծ, Ս. Պատ-
րիարքին այս պատճառաւ գող ելնե-
լով և այլայլելով Պատրիարքարանէն
մեկնիլը: մասնաժողովոյ անգամոց
ցրուիլը, և այլն:
Կրօնական ժողովոյ Ատենապետ
Սրբազանը խոստովանեցաւ որ Ս. Պատ-
րիարք հայրը ժողովոյ որոշմաններուն
վրայ դիմողութիւն ընելու և գործ
ժողովութիւնն ետ ձգելու իրաւունք
ունի միշտ ըստ Սահմանադրութեան
հետեւաբար Ամբրոսիոս վարդապետ
սին առանց Պատրիարքական հրա-
ւիրագրի երթալ մասնաժողովին մէջ
նստիլն և յամենիլ կենալն և մանա-
ւանդ Ս. Պատրիարքին անաստեղծ
բնաւ չկրնար արդարանալ:
Այս առթիւ գոհութեամբ իմա-
ցանք Գեր. Խորէն սրբազանէն, թէ
կրօնական ժողովն իր ձեռնհասու-
թեան վերաբերեալ ինքեցոց կար-
գադրութեան և եկեղեցականաց
բարեկարգութեան համար կանոնադ-
րութիւն մը շինելու ձեռնարկած է
առաքելական և հայրապետական
սահմանադրութեանց վրայ հիմնեալ:
նմանապէս յայտարարեց մեզ թէ կը-
րօնական ժողովն եկեղեցականաց կա-
նոնադրանցութիւններն անպատիժ չը
պիտի թողու, ինչպէս նաեւ եկեղեց-
ւոյ օրինաց դէմ կատարուած դեղ-
ժուհները, ասոր համար խնդրեց մեզ-
նէ որ ժողովոյն այս բարենպաստակ
շանքը մեք ալ մեր կողմանէ քաջա-
լերենք:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կրօնական ժողովոյ ատենապետ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԻ ԵՐԵՎԱՆԻ

Մայրաքաղաքի թաղերէն սմանց մէջ այս օրերս կատարուած երեսփոխանական ընտրութեանց վրայ այլ և այլ գանգաւաններ կը լսուին, իբրեւ հակառակ Սահմանադրութեան ապօրէն կերպիւ կատարուած, այսինքն Սահմանադրութեան պահանջած տարիքի և տրոյց պայմանները տեղ տեղ բոլորովին բարձի թողի եղած: Թաղի մը մէջ, ուր հազիւ 120 հոգի կընէ տուեալ 75 զրջը ընդհանուր տուրք վճարող, 3—400 ընտրողաց ցանկ* կը շինուի, այնպիսի անձանց, որք իրենց կենաց մէջ 75 փառա իսկ ազգային տուրք վճարած չեն և չեն վճարեր. ասկէց զատ տարիքի պայմանն ալ նկատողութեան չառնուելով, անչափահաս պատանիներէ իսկ քուէ կառնուի այս կամ անձին մեծամասնութիւն վստահեցնելու համար:

Այսպիսի ապօրինութիւններով կատարուած ընտրութիւնք բնականաբար անօրէն են և չեն կրնար ընդունուիլ: Ուստի յանուն օրինաց կառավարիկներ, վարչութեան և մասնաւորապէս Ամեն. Ս. Պատրիարք հօր՝ քննութեան ենթարկել այդ ընտրութիւններն, և կատարուած ապօրինութիւնները դարմանել:

Այս քննութիւնը սահմանադրութեան դործադիր յանձնաժողովին ձեռք չլինար ըլլալ, որովհետեւ կատարուած ապօրինութիւնք յիշեալ յանձնաժողովին կամ անհադութեանէն և կամ գիտութեամբ աչք դոյցելէն (չքննեք աւելի) ծագում առած ըլլալով, պատասխանատուութիւնը մեծ մասամբ անոր վրայ կ'ընկնայ. հետեւ տարար հարկ է որ քանի մը ձեռքն հաս և Սահմանադրութեան ճշդիւ դործադրութեան ճշմարտագէտ նախանձախնդիր անձերէնոր յանձնաժողով մը կազմուի և անոր ձեռք կատարուի, որպէս զի վերոյիշեալ անտեղութիւնք վերջ դանեն:

Սահմանադ. 65-րդ. յօդուածը բացորոշ է: «Երեսփոխանական ընտրութեան մասնակցելու անոնք միայն իրաւունք ունին որք տարին դոնէ 75 զրջը ընդհանուր տուրք կը վճարեն»: Այս յօդուածը մեկնութիւն չկընցըներ:

Ներկայ Սահմանադրութիւնը տասը տարիէ ի վեր դործադրութեան դրուած է, և տասն տարիէ ի վեր 75 զրջ տուրք կը հաւաքուի: Վարչութիւնը՝ կամ իր կողմէն կարգեալ յանձնաժողովը՝ կերպովական սնտուկին ազգային տրոյց տուամբը ձեռքն առնելով՝ անոր մէջէն պէտք է հանէ իւրաքանչիւր թաղէ 75 զրջ ընդհանուր տուրք վճարող անձանց ցուցակը, և երեսփոխանական ընտրութիւն ըլլալու թաղին եկեղեցւոյն բակը կախելով, հրաւեր կարգւոյ որ այն ցուցակէն դուրս մնացող անձինք ալ եթէ կուզեն ընտրութեան մասնակցիլ, պէտք է որ առ նուազն 75 զրջ վճարեն, և ընտրողաց ցանկին մէջ անցնին:

Ահա այս կը պահանջէ Սահմանադրութեան արամադրութիւնը. ասկէ դուրս չկայ օրինաւորութիւն. հետեւաբար առանց այս անհրաժեշտ

* Այս ցանկին վրայ դիտողութիւն ընդունելու պատասխան կը տրուի թէ չարաթը 60 փորայ տալու կարողութեան վրայ շինուած է եղեր, թէ և երբէք պահանջուած կամ առնուած չէ այդ չարաթական 60 փորան և յաւիտեան ալ առնուելիք չունի:

Արեւելց կրնայ հասկցուիլ թէ Սահմանադրութեան բացորոշ մէկ արամադրութիւններով չարաթը մեկնութեամբ խեղաթիւրած և իր թէ՛ դէն և թէ՛ ոգիւն օտարացած է:

պայմանին կատարուած ընտրութիւնք ապօրինաւոր և անօրէն են:

Ամեն. Ս. Պատրիարքը՝ որ Սահմանադրութեան անթերի դործադրութեան ճշմարտագէտ հսկելու ուստ ըրած է, իւր օրով կատարուած երեսփոխանական ընտրութիւններն ուրիշ կերպիւ չլինար ընել տալ՝ առանց իւր ուստին դէմ մեղանշելու: Հետեւաբար պարտաւոր է վերջին օրերս կատարուած տրոյցինաւոր ընտրութիւնները ոչնչացնելով Սահմանադրութեան յայտնի և բացորոշ արամադրութիւնը դործադրել:

Կը յուսանք որ վարչութիւնը մեր այս օրինաւոր դիտողութիւնները նըկատողութեան առնելով կը փութայ անօրինել դարձան, և հարկ չ'իծուղուր ժողովրդական նորանոր բողոքաց և երեսփոխանական հարցմանց:

Կը լսենք թէ ամենական մէկ քանի դատերու առթիւ Գառնատանական խորհրդոյ կողմանէ տրուած վճռադիւնները՝ Բ. Դուռը դործադրութեան երթալէ ետեւ՝ Պատրիարքարանի Գառնատան մասնաժողովին կողմէ վերաքննութեան ենթարկելու փորձեր կըլլան, մինչդեռ Բ. Դուռն ընդարձութեան Բարձր. ատենի օրինադրին երկրորդ յօդուածին համեմատ անվերաքննելի կը ճանչէ զանոնք:

Ասոր հետեւանքն, ինչպէս յայտնի կը անհնուի, ազգային ամենակարեւոր արտօնութիւն մը փոխադի մէջ ձգել է, արտօնութիւն մը, որոյ տէրն ազգին ընդհանրութիւնն է և վարչութիւնն ալ անոր աւանդապահ է:

Եթէ ստոյգ է մեր լսածը, Ս. Պատրիարք հօր և կրօնական ու քաղաքական ժողովոյ ուշադրութեանը կը յանձնենք:

Գառնատան մասնաժողովը կրնայ դատաստանական խորհրդոյ որոշմունքը վերաքննել երբոր դեռ Բ. Դուռն չեն հաղորդուած, իսկ հաղորդուելէն ետեւ վերաքննութեան ենթարկելը Պատրիարքարանի մէկ մեծ արտօնութիւնը ջնջել է, սրոյ դէմ ամեն հայ բողոքեցող իրաւունք ունի:

Ըսուի թերեւ թէ դատաստանական խորհուրդը կրնայ սխալած և անիրաւ վճիռ մը տուած ըլլալ: — Այո՛, շատ հաւանական է, բայց ասոր առաջին ուրիշ կերպիւ կրնայ առնուիլ, այսինքն պայմանաժամ մը որոշել, որոյ մէջ դատեալ կողմերն իրաւունք ունենան Ս. Պատրիարքին բողոքելու և իրենց դատին վերաքննութիւնը ինքզինքն. այս վերաքննութիւնը կատարուելէ ետեւ վճիռը Բ. Դուռն հաղորդուի: Այն ժամանակ ոչ սխալման կամ անարդարութեան կատարած կը մնայ, ոչ ալ ազգային կարեւոր արտօնութեան մեղծութեամբ փոխադ:

Պ Ա Ս Ս Ս Ս Ս

ԽՐԻՍՏՈՍ ՍՐԲՈՍՏՈՆԻ

(Շար. Տէս թիւ 1564)

Կեդր. վարչութիւնն երբ օրինաց այս կարեւոր հրահանգները ի բաց կը թողու և համառօտ դատաստանաւ մի կըլուծէ Մշտն հինաւոր խնդիրը, այնուհետեւ ինքն ոչ միայն Սահմանադրութեան շրջանակէն դուրս կանգնալով կըլնի, այլ աստի մինչև ի Մուշ կը հեռանայ օրինաց դրձէն:

Ուստի խնդրահարկ կաղաչեմ համարձակութիւն տուէք որ հրաւիրեմ զձեզ օրինաց նեղ և քայն չըլնա-

նակին մէջ: Ես անդդոյ էի, ձեզ պարտ էր դեռ չանալ, դէպ ի դուրս չվազել, զի Սահմանադրութեան ժըրադօտի զինուորները պահապան են և կ'ապասեն շուրջանակի: Ես դիտեմ և փորձառութեամբ դիտեմ, որ կը նեղուիք և կը ճնշուիք օրինաց անձկութեանէն. . . այլ սակայն ձեր խոռոման հաւատարմի մնալով՝ պարտաւոր էք օրինաց հիւսուածոյ ցանցը չը պատել:

Մանենք ուրեմն օրինաց ցանցին մէջ և օրինօք լուծենք Մշտն վանից խնդիրն. եթէ դժուարիք՝ ես օժանդակ կըլնիմ. եթէ օրէնքը զիս չլուծէ՝ ես ինքնին դիտեմ զիս լուծել և հրաժարելով հրաժարիլ:

Վասն որոյ կը խնդրեմ որ նախ Գլակայ վանուց միաբանութեան ամբաստանադրին պատճէնը չնորհ ընէք ուղղել առ մեզ և պաշտօնագէտ բացատրութիւն պահանջել, և երբ մեր բացատրութեան իրաւացի փաստերը բաւական չի համարիք, այնուհետեւ հարկ է որ քննութեան պայմաններն ի դործ դնէք բոտ հրահանգի Սահմանադրութեան: Երկրորդ, ի բաւուրք ունիմ խնդրել նաեւ, որ վանքից խորհրդոյ առած անդեկագրին պատճէնը ես մեզ յանձնելու բարեհաճիք, վասն զի այդ տեղեկագիրը մասամբ իւր կամ թերեւ ամբողջութեամբ իսկ ամբաստանութիւն է մեր վրայ, ուստի սահմանադրապէս պէտք է որ զիս պատասխանատու կոչէք առ այն և բացատրութիւն պահանջէք:

Ահա ասիկայ այս է Սահմանադրութեան օրինական կերպն եթէ յիշուի Մշտն վանից խնդիրն օրինօք լուծել կուզէք:

Ես չեմ հաւատար և ոչ ոք կուզէ հաւատար, որ Ազգ. վարչութիւնը Գլակայ վանից խնդիրն արտաքին օրինաց լուծել աշխատի, և տասն և չորս տարի յետոյ երթալով դաւադանաւ վարէ այս խնդիրն: Բաւ, եթէ վարէ, և տարապարհակ վարէ, ես իւր հետը մինչև երկու միոն կերթամ. ոչ աղաղակ կը բառնամ, ոչ իրաւունք կը խնդրեմ, ոչ կ'ոտոհաւիրմ և ոչ ընդդէմ կը դառնամ, զի այդ է միակ իմ ճշմարտութեան ապացոյց ներկային և ապագային առաջ:

Խրիմեան՝ միանգամ և եթէ այդ դաւադանը թէ առ հարկի և թէ երկրի մի ճնշեալ ժողովրդոց իրաւանց համար ի դործ դրաւ, Սահմանադրութեան բարձրագոյն մասնակիցներն աշխարհ աղաղակաւ լուցցան, ուր են այժմ. . .

Արդ՝ այսչափ և այսքան իմ իրաւացի փառաբեր յառա՛ծ բերելէն յետոյ, այլ ևս կը մնայ ինձ փառահ ինեղ Ազգ. վարչութեան վրայ, որ Սահմանադրութեան օրինաց պատկառմնալով, միանգամ երկիցս և երկցս ևս ուշադրութեան կառնուոյն խնդրել, չը նայելով թէ արդէն իւր ուրջումն տուած է, զի լուս պահ մի յետոյ թողու իւր որոշումն՝ քան թէ հապճեպով որոշումն տալ, ուղղին շահը փոխադել, և միանգամայն Մշտն երկրին հանդարտած խաղաղութիւնը վրդովել:

Եթէ ներքէն ինձ, անկեղծաբար և ծառայօրէն խորհուրդ կուտամ, որ Մշտն խնդրոյն անցեալէն իսկ և ապագայն հեռատես խնայողութեամբ նկատէք, զի այս խնդիրն իւր անցեալ պատմութեամբ և նշանակութեամբ առաւել դժուարին և ծանր է՝ քան թէ Սոյ և Աղթմաշայ խնդիրները: Գաւառային բովանդակ խնդրոց մէջ եթէ կայ քառամասնաւոր և անմասնաւոր խնդիր մի, այդ խնդիրը Մշտն

խնդիրն է. պէտք է ամենայն դեռ շուրջանակ շուրջել զայն:

Կաղաչեմ, հրամայեցէք, թող բացվի Ձեր առաջ Պատրիարքարանի դիւանը, 1862-էն սկսեալ կրկնեցէք, հետադարձեցէք բովանդակ թուղթերը՝ որք Մշտն վանից և այդ երկրին կը վերաբերին, հանրադրութիւնք տեղեկագիրք, վճիռք, արձանագրութիւնք, և յայնժամ ստուգելու խնդրանք կը լինիք թէ ինչ է Մշտն խնդիրն և ինչու համար վարչութեան կողմէն զրկուած քանի՛ քանի պաշտօնեայնէր միշտ հալածական և քարկոծ եղած են Գլակայ վանուց բնակաւոր մշակներէն, որք Աւետարանի սուսակէն սորվելով ամեն ժամանակ այսպէս խորհեցան, խօսեցան և դործեցին: «Եկայք սպանցուք ըզսա զի մեր լիցի ժառանգութիւնն»:

Այո՛ խրիմեանն այդ սպանութեան համար նուիրուած էր նախորդ վարչութեանց կողմէն, որք ութ տարի շարունակ ձեռնկալու հանդիսացան և պաշտպանեցին իրաւունքը՝ մինչև փոքր ի շատե՛ ամառեցաւ մեր վանական եղբարց խնայողութիւնը, որք անաղան ուրեմն ճանչցան թէ Գլակայ վանուց բարեկարգութեան խնդիրն՝ ոչ միայն ազգին և Եկեղեցւոյն շահը կարգիւնաւորէ, այլ և իրենց յառաջագիւծութեան, պատուոյն և պարծանաց համար մեծ փառք է և վանական կեանքը երջանիկ կը կազմէ: Ուստի խնայողութեամբ զգուստացան թէ ժամանակին հետ՝ Ազգին հետ՝ կուռել այլ ևս անհնարին է, սուրն ի պատեան դրին և հաշտուեցան Ազգային վարչութեան հետ:

Բաւական ժամանակ էր որ բարեւոր և խաղաղութեամբ կ'ընթանալին: Քանի մի ձեռք կտր քարանամուտ, որ զիրենք վերադին յուզեց, դրդուեց և այդ սուրը կրկին պատեանէն հանել տուաւ: Ես սովորած չեմ նղովելու խօսիլ, ապա թէ ոչ Պողոսի պէս զայրանալով պիտի տսէի. մօտակաւոր լինէին այն մշակաց ձեռք, որ փոխանակ խաղաղութեան՝ խռովութիւն կը սերմանեն և կը պառակտեն եղբարց միութիւնը:

Արդ՝ եթէ ազգային վարչութիւնը չը ճանչնայ այդ խռովարար ոգիներն և թող տայ որ նոքա յաջողին, եթէ իւր նախորդաց պաշտպանութիւնը մերժելով մերժէ, այնուհետեւ չէ թէ Գլակայ վանուց մշակները կամ իմ ուսուցիչներն են որ զխրիմեան և իւր իրաւունքը կ'ապանեն, այլ նոյն իսկ Ազգ. վարչութիւնն է, որ իւր ձեռքով իւր անձնատուէր պաշտօնեայն կ'ապանէ և վճռադիր կը հանէ թէ օրէնքով սպաննեցի:

Ահա այդ իսկ է իմ փափաքն՝ և բողոքը, որ օրէնքով սպաննես. և ես յօժար յանձնառութեամբ պարանոց կըլնեմ օրինաց սուրին տակ, թող արդարութեամբ հատանէ և քո ձեռք անբասիր և անարիւն մընայ:

Այլ եւս խօսքս կըլնիքմ, բաւ և շատ համարեցէք վշտահարութեանս ձայնարկու բողոքը, զոր հանելով յատեան վարչութեանդ՝ կ'ապասեն իրաւարար վճռոյդ:

Մ. ԽՐԻՍՏՈՍՆ

. . . Խրիմեան

Արեւ 75—6—75 թիւերու մէջ Բաղուշն եկած նամակներէ մի հաւաքածոյ կարգալով արդարեւ յանձնարինս վստահեցայ սեղանէն ազգայնոց հարստահարիչ տէնչակ յիններէ կրած դուռն զրկանաց և Գեր. Սարգիս վարդապետի վրայ դուռն ծածուած խոչանդանաց նկատմամբ:

կարծեմ չկայ զգայուն սիրտ մը որ զայն
կարողարձ քն զրգովի և չը յուզի և
վայրկեան մը մտախոհ՝ ապա ինքնին չը
գտնէ իրաւունք և արդարութիւն, որ 19
րդ դարու հարազատ և միակ ծնունդ է,
ի շնորհիւ Նորին Վեհափառութեան մեր
հայրախոսման Օրհնոստապետ կայսեր, որոյ
օրինակ տրամադրութիւնը և հաւատա-
շուքիւն և եղբայրութիւնը, և որ երբեք
չը ներքեր անոնց բռնաբարձաց, եթէ օ-
րինաւորապէս խնդիր մատուցանելով դու-
տաւանան պահանջուի. ո՞չ ապաքէն Նո-
րին վեհափառութեան զլիւստոր սկզբուն-
քն ու բարձրանքն է իւր համայն ժողո-
վընդեան տնդորդութիւնն և խաղաղ
փենդապը: Արդեօք Ամեն սրբազան հայրն
զաւառացի եղբայր՝ այս անտանելի վեհա-
կըն մինչ յայս կէտ ի նկատի չէ՞ տուած
և զարժանն չէ՞ տնօրինած (ինչպէս կը
յուսատը): զի երբ առաջնորդ մը առանց
դատաւարանի կը բանտարկուի, ազդ մը
և նորաջիւղօնն ու եկեղեցին կը բանտար-
կուի, և երբ երկազ օրծը զերկիր մշա-
կելէ կարող երբեք տէրութեան օրէնքը կը
բռնաբարի, և երկրադործին մանուկն
իւր ծնողաց հետ սովի կը դատապարտի,
այն զի նոցա ձեռքն ի նկատապահիկ հա-
ցըն կը խլի, և երբ այսպէս լաւ էր մար-
դայն այնիկի՞ թէ չէր ծնեալ:

Իսկ զայնով Բաղնիկ եղբայրը.
Եղբայր, դուք ևս էր՞ տակաւին կը
տատաւանիք. միտք իւրն է մայր բարեաց,
իսկ անմիտք իւրն է ծնող չարեաց. երբ
դուք միանաք, երբ ձեր ճշդեան եղ-
բայրարար ի մի վայր թափէք, այն ատեն
վատահ եղբիւր թէ մերձ է դարձան. իսկ
ընդ հակառակն երբ դուք տակաւին ան-
տարբեր խորդաք, տակաւին լուք, ձեր
կորուստը մատաւառ է. ոչ եղբայր, ոչ
մի սոցիալ մեղքութիւն, զի անտար-
բերութիւնն է մեղքութիւն, սկսած է
ձեռք ի ձեռն դործները ինչ որ յօգուտ
մեր են և զորս մեր շահն կը պահանջէ.
էր չէք փութար ձեր ցաւերն մի առ մի
յայտենէ մեր հայրախոսման վեհափառ Սու-
թանին և կամ նորա բարձր մեծ պաշտօ-
նին, որոնք պատրաստ են ժողովրդեան
ո և է դատու աղբիւր լուք և ըստ այնմ
զարժանն անօրինակ: Ձեր խնդիրն երկ-
րադործական է, երկրադործութիւնն ու
վաճառականութիւնը տէրութեան մը հա-
րաւորութեան զլիւստոր աղբիւրն են, ըզ
նոսա արդիւնք մեծագոյն մատաւր նոյն
տէրութեան թշնամին է, և այնպիսի թշ-
նամնայ մը դատաւարաբար նոյն ինքն տէ-
րութիւնն է, և որն որ հեռակարար իւր
արժանաւոր պատիւն ու պատուհասը
պիտի կրէ: Ժամանակ է որ սթամբուլ,
անցած ժամը այլ ևս չվերադառնար, և
բիւրաւոր ախիւր ու եղովներ մի վայր-
կեան չեն կարող կազմել երբ երկրա-
դործութիւնն օրինաւորաբար առ ձեռ
դառնայ, երբ հանգիստը թաղաւորէ,
երբ բռնութիւնը դադարի, այն ատեն
ինչ հարկ ձեռ խումբ առ խումբ պան-
դըլտանալ ի Պոլիս, և անդ զարշաւող
զաղարհոտ և մինչ իսկ կենսալիւս խանե-
րու անկեանց մէջ փութելու ութն տասն
ամ, և ապա ձևերային մի քանի խիստ
ամիսներու համար վերադառնալ ի հայ-
րենի տուն, դարնայնում ամենայն ա-
ճապարանք վերադառնալ Պոլիս վերադառ-
նալու եւ անդ եթէ ութն երկուցն տա-
րիներ ևս ճշնելով, և ո՞չ զոչ օր մը
հեռի մէջ մի սիրելիներէ յաւիտենական
նոթեան համար ձեր աչիւնքը փակելու:
... 85ր, հաճեցէք, մեր այս ի սըր-
տէ բղխեալ խոնարհ հառաչանքը տալըն
ջականել ձեր մտաւոր թերթերէն միւցն
մէջ հանդերձ ձեր յատուկ խորհրդաւո-
թեամբ եթէ արժան դատեք, որով կը
պարտաւորեք զմեզ միտք ձերդ: ...

Կ. Պոլիս
1874 օգոստ. 1 (Քալուցի տն)

ՆՈՒՊԱՐ—ՇԱՀՆ. ՎԱՐՔԱՐԱՆ
Ի ՆԱԽԳԻԻԿ
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Վարժարան չորս տարիէ ի վեր ի-
մեկնեան էջնիւրի բազմաթիւն տես-
չութեամբ կառավարուելով, խնամա-
կալութեան ընդունած ծրարքին համե-

մատ հարկ եղած ուղղութիւնն առած և
այսուհետեւ առանց դժուարութեան հե-
տընդետէ աւելի կատարելագործուելու
վիճակին մէջ գտնուած միջոցին, ի՞նչե-
ճեան էջնիւրի կը հրաժարի տեսչութեան
պաշտօնէն, առեն մ'ալ Զուլեյքիյի հա-
րաւորաց կրթութեան շարժումն ի մտոյ
տեսնելու համար, որով կը յուսայ ազգին
և մատնաւորապէս Վարժարանի աւելի
մեծ ծառայութիւն ընել:

Այս առիթով խնամակալութիւնն պարտք
կը համարի արտաւարժան ծնողաց հաղոր-
դել թէ իւր ծանր պաշտօնը յօգուտ Վար-
ժարանին և ի գոհունակութիւն ծնողաց
կատարելու համար, ինչպէս մինչև ցարդ,
այսուհետեւ ալ պիտի շարունակէ որ և ի-
ցէ Զանք և աշխատութիւն չը խնայել այս
ազգոգուտ հաստատութիւնն իւր զար-
դացման վիճակին մէջ յարատեւ պահելու
համար:

Արդեւեւ վարժարանի մը բարեկար-
գութիւնը միանգամայն դատաւարաց և
անոր ուղղութեանը վրայ հսկող պաշտօ-
նատեարց հիմնութեանն ու կարողութեանն
կախումն ունի, վարժարանն դատաւարաց
և պաշտօնէից ընտրութեան մասին՝ ա-
մեն բանէ աւելի խնամը կը տանի և հնա-
րաւոր եղած որ և իցէ զոհողութիւն չի
խնայեր, որպէս զի իւրաքանչիւրն իւր
պաշտօնին սեպական հիմնութիւնն և զայն
դորձադրելու կարողութիւնն ու ժամա-
նակն ունենայ:

Անցելոյն վարժարանին օգուտ քա-
ղելով՝ խնամակալութիւնն պաշտօն դա-
տած է յառաջիկայ տարուան մէջ մէկ քա-
նի կարեւոր բարեկարգութիւններ ընել,
որոց զլիւստորներն են.

Ա.— Վարժարանիս ներքին տեսչու-
թեան և անտեսակալն բոլոր ճիւղերու պա-
տօններն իրարմէ դատել:

Երբեքն տեսչութիւնը յանձնուած է
Ուսումնապետին, որ է Զիլիեան էջնի-
տին (Վերամանիկ երեւելի համարարան-
ներուն մէջ ուսումն առած), և որ տարիէ
մ'ի վեր Վարժարանիս մէջ գտնուելով,
այդ պաշտօնին պատրաստուած և խնա-
մակալութեանն վստահութեանն արժանա-
ցած է:

Իսկ տնտեսական մասը՝ խնամակալու-
թեան իւր խնամակալն տնօրէնութեան
տակ կառնու և անոր զանազան ճիւղերուն,
այսինքն երկմտից մատակարարութեան,
թոշակաց հաւաքման և այլն ամենօրեայ
հսկողութիւնը պիտի կատարէ Վարժա-
րանիս մէջ գտնուած զանազան պաշտօ-
նէից միջոցաւ:

Բ.— Աշակերտաց տարեկան թոշակաց՝
վճարման գինն առանց փոփոխութիւն կը-
րելու, փոխանակ վեցամսէ՛ի քառամսեայն
միայն կանխիկ պիտի պահանջուի՝ ծնողաց
դիւրութեանը համար:

Գ.— Ուսմանը ընթացքին մէջ մէկ քա-
նի կարեւոր փոփոխութիւններ պիտի ըլ-
լան, որ քիչ օրէն հրատարակուելէ նոր
ծրարքին մէջ ընդարձակօրէն պիտի տես-
նուի: Գլխաւորաբար Գ. դատարանին մէջ
ալ մէկ քանի ուսումնը Գաղղիերէն լեզ-
ուաւ պիտի աւանդուին: Քանակազիւտու-
թեան ծրարքն աւելի ընդարձակուած
է, և երկրաշտակալն մասին աւելի գործ-
նական ուղղութիւն պիտի տուի ինչպէս
նաև տարրաբանութեան դործնական կըր-
թութեանը համար յարկ լազարտանք մը
պիտի ըլլուի:

Դ.— Եթէ ի դատարանի մէջ գտնուած
թոշակաւոր աշակերտը մնալու ըլլան, Զ.
դատարանն պիտի կարենայ բացուիլ այս
տարին:

Ե.— Վարժարանին շէնքն ինչ ինչ նո-
րագութեանց ալ տը ունենալով և բարձրա-
գոյն կարգի Գաղղիացի վարժապետաց
բացակայ ըլլալուն պատճառաւ, յառա-
ջիկայ տարուայ դատարանն բացուիլ Սեպ-
տեմբերի 2ին պիտի ըլլայ, եւ որովհետեւ
Իսկիճեան էջնիւրի յօժարած է Վարժա-
րանիս յառաջող իմութեանը համար կա-
րեւոր դատուած փոփոխութիւնները դոր-
ժադրելու միջոցին իւր վարժարանութեամբ
խնամակալութեան աջակցելէ ետեւ յանձ-
նել ներքին տեսչութիւնը իւր յաջորդին
և յետոյ մեկնել, ուստի պէտք է որ բո-
լոր աշակերտը Սեպտեմբերի առաջին օրը
կիրակի երեկոյն անպատճառ ներկայ
գտնուին ի Վարժարան:

խնամակալութիւնն աներկայ է որ

Պատուարժան ծնողք՝ խնամակալութեան
առեւելով Վարժարանիս յառաջող իմութե-
անը համար իւր կողմանէ եղած Զանքն
ու զոհողութիւնները, չը պիտի զոհանա
նոր բարեկարգութեան յարաւորութեան
համար դրուած կանոնաց դորձադրու-
թեան մասին իրենց կողմանէ ստատուած
ճշդութիւնն ու աջակցութիւնը նուիրելով
քաջակերել այս ազգոգուտ հաստատու-
թիւնը:

Խաղաղ և խնամակալութիւն
5 Օգոստ. 1874 Նուար—Շահնապար-
եան վարժարանի

ԱՅԳ

Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկե-
ղեցւոյ վաղըֆէն Սարեհար Եֆէնի մա-
հալէ Պառլա վտոյց թիւ 1 տան 2/12
բաժինը մահլիս ինկած ըլլալով, յիշ-
եալ տան միւս բաժանորդաց կողմէն
մահլիս բաժինն 4080 զրշ կը յորը-
ուի: Արդ. եթէ տեւի տուող կայ,
թուականէն մինչեւ 15 օր պէտք է
դիմէ Ղալաթիոյ խորհրդարանը, ա-
մէն տաւառ ժամը 1—3:

29 յուլիս 1874
(Կնիք Թաղ. Խորհ. Ղալաթիոյ)

ԱՅԳ

Մէղսուրեան երկսեռ վարժարա-
նը յառաջիկայ բնի օգոստոս 5էն մինչ
20 արձակուրդ տնի իւր սանուց եւ
սանուհաց, այս առթիւ կը մտնույ-
ւի աղնիւ աղդայնոց, որ եթէ կը վա-
րաքին իրենց զաւակուները զիշխութիւ
աշակերտութեան տալ, բարեհաճին
երթալ ի վարժարանն պարտ ու պատ-
շաճ տեղեկութիւնքն ստանալու, և
եթէ ուզեն՝ դրով իմաց տան վարժա-
րանին անստանութեան, որ պատրաստ
է երթալ անձամբ տեսնուիլ եւ պէտք
եղած տեղեկութիւնքն ուղղուն հա-
ղորդել:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՏԵՊԷԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՄԱԿԵԼՈՑ

Կամ

Պարտութեան Խաբան Բնորութեանց
'ի նախնի Ժամանակաց հետե Բնիւ ցայօր.
Բարդմանեաց Ե. ձկանեան

ՏԵՏՐ Գ.

Բոլանգալու թիւն. — Մոգական,
հրաշքործութեան եւ ըզմական ար-
ուեստք. Գաղղիեր, Խորհուրդք. Կո-
չումն սոցոց, Երեւմունք, Սրբազան եւ
ժողովրդական ուրուստեւիլք. Մե-
քենաղ խոտ թիւն, Թունաբանութիւն,
Հրաբուհատ, Կախարդութիւն, Գիշե-
րաժողով վճկաց, Վհուկ, Գիւստեքք,
Բժժանք, Յուսութիւն, Մոգական օճու-
մըն, Զղատարաւք, Փիլիսոփայական
քաւր, Մագիստրալականութիւն, Երեւա-
րականութիւն եւ այլն եւ այլն:

Տեւր առ տեւր պիտի հրատա-
րակուի. Գին մէն մի տեսքին 40 փա-
րայ:

Կըմախուի Գալաֆեան եւ Յրէնկ-
եան գրատուններն ի Կ. Պոլիս եւս եւ
Մաթեոսեան Պարտաղան կամիջին զը-
լուիլ, եւ ամեն Հայ գրաւորանաց
քաւր:

Ա. ՏԵՊԷԻ այն հետաքրքրաշարժ
դործն ամբողջ թարգմանուած ըլլա-
լով, միւս տարիներն եւս հետը-
հետե անյապաղ պիտի հրատարակ-
ուին:

ԵՄԱԿԵԼՈՑ

Հմուտ եւ վարժ հայկաբան մը չա-
բաթը երեք կէս օր պարտալ ժամա-
նակ ունենալով, պատրաստ է ազգա-
լին վարժարանի մը մէջ հայերէնի
տրամաբանութեան եւ հոգեբանու-
թեան դատաւարութիւն ընել:

Ուղղը լրագրոյս Խորհրդին կըր-
նայ տեղեկութիւն ստանալ:

ՀԱՐԻԻՐԻՆ 25 ԶԵՂ
ՄԻՆԱՍԵՐԵՆԻ ԵՒ ԵՄԱԿԵԼՈՑ

ՆՈՐԱՆԱՌՈՑ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՅԱՌԱՍԱՆ ԲԱՑՈՒԻԼԸ

Ս. Մ. Մինոսեան եւ ընկերք պա-
տիւ կը համարին ծանուցանել արդոյ
հասարակութեան, որ իրենց Վալաթի-
եան վաճառատունը վերադին կա-
ռուցուելով մօտեւ բացուեցաւ, և
այն առթիւ իրենց բոլոր վաճառք-
ները զեղչով պիտի ծախուին սկսեալ
օգոստ. 8/20էն մինչեւ 18/30 սեպտեմբ-
բեր. ուստի հասարակութիւնը յար-
գանք կը հրաւիրուի այս պատեհու-
թեանն օգուտ քաղելու:

Կարի դործիք՝ Սեպա եւ երկաթ
խաղովաներու գիններէն միայն հար-
ւուրին 10 զեղչ պիտի ըլլայ:

Բոլոր միւս վաճառաց գիններէն
հարկին 25 զեղչ պիտի ըլլայ:

Վալաթիեան վաճառատուն
ճամբ դարուսի Ղալաթիա
1

ԻԼԱՆ

Շիրքեթի Խալիկէ վարժարը Ի-
լին լիւզուս օրան պիլիքի վէ էվրադ
սայիւրէ պիլ միւնադ ասա թաղ իմ-
աիրիլէճէկի ճիւղէ իլէ թալիպ օլան-
լէր իշ պու շէհր օգոստոսուն սեքի-
զինճի բերշէմպէ կիւնիւնալն իմի-
պարէն պէհէր բերշէմպէ վէ բաղար
իրթէսի կիւնիւնլ Շիրքեթի Խալիկէ
խաւրէ մէճիւսին կէլմէլէր իլան օ-
լունուր:

ԻԼԱՆ

Եւսմուշաք Խալիկէ պուղտայր,
քիլէ 6300, պէհէր քիլէսի 34 զրուշ,
Պէհէր քիլէսի 57 լիպրա կէլմէլէր.
պիլ լիպրա նօգսան զուհուր իտէր ի-
սէ, պուղտայ իլէ 57 լիպրայէ տօլ-
տուրուլաւադ տըր:

Եւսմուշաք Խալիկէ պուղտայր,
քիլէ 3700, պէհէր քիլէսի 38 զրուշ,
Պէհէր քիլէսի 60 լիպրա կէլմէլէր. պիլ
լիպրա նօգսան զուհուր իտէր իսէ,
պուղտայ իլէ 60 լիպրայէ տօլտու-
րուլաւադ տըր:

Սէրթ Խոմալիլ պուղտայր, քիլէ
15000, պէհէր քիլէսի 40 զրուշ, Պէ-
հէր քիլէսի 60 լիպրա կէլմէլէր, վէ
էկէր պիլ լիպրայէ դատար նօգսան
զուհուր իտէր իսէ, պուղտայ իլէ 60
լիպրայէ տօլտուրուլաւադ տըր:

Ասաքիլի Շահանէ նանը աղիլ ի-
տարէսի իլին լիւզուսի օլու պիլ լիւնա-
գասայէ գօնըլան պալէսատէ մուրադ-
գամ իշ գալէմ պուղտայ ֆիւսաթը
մուրադ գամէլէր իլէ թալիպէրի Էօհ-
տէլէրինտէ օլուպ, աղաթիւր Բուլմին
Եհմինճի չարշէմպէ կիւնիւ. գարարը
գաթիլէր ինճա օլունաւաղընտան,
իմա իմ մէյ թալիպ օլանլարն եւ վ-
մի մէյ քիլէսի 58 զրուշ Եւսմուշաք
քիլէ կէլմէլէր:

3 Աղաթիւ 1874
Պապը Մէրաքէրի

Տօրանն սէնէսի իլու ի իլիթիտա-
սընտան տօգսան պիլ սէնէսի աղա-
թիւ նիհայէթինէ դատար պիլ սէնէ
զարֆընտա Նիդամիլէ նանը աղիլ ի-
տարէսի տէլիլմէլէրինտէ նէ մրդ-
տար քէլմէլ հասը օլու իսէ պէտէ-
լին քէնտի նամուն վէ թաղաթիլ
կէլմէլ վէ օլմ մէճիւսին 21էր զրուշ
օլարադ Նիդամիլէ խալիկէսի սէրիլիսի
վէրիպ թէսիլէ իմ մէյ չարթիլ իլէ
պէհէր զըլէսի 20 բարալա իլիթիլայէ
թալիպ զուհուր իմ միշ օլուպ միւզա-
Եհմէսի աղաթիւր Բուլմին Եհմին-
ճի չարշէմպէ կիւնիւ թէքրար ինճա
իլէ գարարը գաթիլ վիլիլէրէք
դօնթիլաթ օլաթիլ ճէլմէլէր իլիլ իլա-
յէ թալիպ օլանլարն եւ վիլ մէյ քիլէսի

